

Յակոբ Օշականը հասանելի՝ ժամանակակից Եւ մատչելի ձեւաչափով

Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Բաժանմունքը, համագործակցելով Հայաստանի ամերիկեան համալսարանի Հայ մատենագրութեան թուանշային գրադարանին հետ, ուրախ է յայտարարելու որ արդ, արեւմտահայ գրականութեան հսկաներէն Յակոբ Օշականի տպագիր հիմնական ժառանգութիւնը ամբողջութեամբ հասանելի է առցանց՝ բաց եւ անվճար ձեւաչափով:

Այս համագործակցութիւնը կը միտի քայլ պահելու թուային եւ թեքնաբանական աշխարհին հետ, հաշուի ամենելով հասանելիութեան անհրաժեշտութիւնը: Ծրագիրին հիմնական նպատակներէն է այս հարստութիւնը եւ հաւաքական ժառանգութիւնը տրամադրելի դարձնել բոլորին՝ անվճար եւ առցանց ձեւաչափով, ապահովելով անոր հասանելիութիւնը եւ մատչելիութիւնը, միեւնոյն ժամանակ նպաստելու անոր պահպանումին, տարածումին, եւ եկող սերունդներուն փոխանցումին:

Այս ծրագիրին շնորհիւ թուայնացած է Յակոբ Օշականէն աւելի քան երեսուն գիրք, ներառեալ *Համապատկեր արեւմտահայ գրականութեան* բոլոր հատորները, *Չուգակչիւ աղբիւրահայ եւ արեւմտահայ գրականութեանց, խոնարհները, Անգղիոն կտուցին տակ*, եւ աւելին: Բոլոր նիւթերը թուայնացած են ո՛չ միայն պատճենելով, այլեւ թուանշուած ձեւաչափով, որ թոյլ կու տայ գրութեան մէջ փնտռողներ կատարել:

Բոլոր նիւթերը հասանելի են Հայ մատենագրութեան թուանշային գրադարանին կայքէջէն՝ <https://digilib.aur.am/am/3ԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ/library/553>



Յակոբ Օշական 1948-ին
(Տէրունեան լուսանկարչատուն, Հալէպ)